

## ՔԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԻՍՏԻԱԿԱՆ ՆՊԻԱԿՈՊՈԽՆԵՐԻ ՀՈՎՈՒԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ.

Սոյն վերնագիրն կրող հովուականից, որ տպուած է Մայեցում հրատարակուղ Archiv für kaholischés Kirchenrecht. 1885. ամսագրի նոյեմբեր և Դեկտեմբեր տետրակներում, քաղուածօրէն առնու մենք հետեւեալ կտորները՝ Թարգմանիչն.

ԵԼԵԿՏՈ-Յ ԽՈՐՀՈ-ՐԴ.

Մեր հաւատով աղքատ և աշխարհախոչ դարու ծնունդն է Քրիստոսի հաստատած շնորհաց և փրկութեան միջոցների բարձիթող առնելն. Ծատ հասկանալի է, թէ ով որ իւր յաւիտենական նպատակը աչքից կորցրած է, նա այդ նպատակին տանող միջոցներն ես անպէտք կը համարէ. Տէրը իւր գթասրտութեամբ մեր կեանքը եօթն խորհուրդների մէջ ամփոփած է, մեր կեանքի ճանապարհի ամեն մի կայարանում, օրօրոցից մինչև գերեզման նա համապատասխան շնորհաց միջոցներ է դրած, բացի սորանից նա հասատած է իւր մահուան յիշատակի համար սուրբ պատարագ և մեզ տուած է մի այնպիսի աղօթք, որն առանց ձանձրանալու հանապաղ պիտի ասենք (Ղ.ուկ. Ժ. 1) և որն որպէս մի առանձին ներդործող միջոց մեր հոգեոր կեանքի աճման համար անհրաժեշտ է: Սակայն ինչպէս Տիրոջ այդ կարդադրութիւններն հաւատացեալներից շատերը թողնում և արհամարհում են, մանաւանդ եկեղեցու սուրբ խորհուրդները. որչափ սակաւներն սուրբ պատարագի մասին գաղափար և հասկացողութիւն ունի. ո՞չ, ինչպէս աղօթքի ողին քրիստոնեաների տներից և սրտերից անհետացած է. և աչա այդպէս առանց շնորհաց միջոցների դործածութեան հաւատոյ կեանքը պիտի թարշամի և վերջապէս բոլորովին պիտի չորանայ: Այդ տեսակ մարդիկ, եթէ մինչև անգամ անհաւատ էլ չըլինին, հարկաւորապէս անհաւատ կըդառնան:

Սիրելի հաւատացեալներ, մենք բոլոր սրտով ձեղ աղաչումենք, որ գուք ձեր անձին փրկութեան համար հաստատուած փրկութեան միջոցները բարձիթող մի առնելք. և ձեզանից ամեն մինին յորդորումներ կրթեա զանձնքու Աստուածպաշտութեան . . . զի աստուածպաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է, և զաւետիս կենաց ունի զալդիս և զհանգերձելոցն: (Ա. Տիմոֆ. Դ. 7. 8.)

ԿԵՐՊԻՑ.

Մինչեւ այժմ յիշատակած ժամանակի երեսյմների հետ սերտ կտորուած է հերակլի և առ օրերի հետուեալ պղծեն, Այսուեղ մենք ուշք կը դարձնենք միայն մի կէտի վերայ. այն է կիւրակէն սուրբ շրագահել ծառայական աշխատանքով, որից շատ հեշտ խուսափել կարելի էր: Ծատ տեղերում, մանաւանդ մի քաղաքներում հակիւ կարելի է տօն օրերը հասարակ օրերից զանազանի: Արու սաներով և վաճառականութիւններ պարապումեն Աստուածուն նորիրուած.

օրը և այդ էլ գլխաւորապէս ճաշից առաջ. Այդ օրը ամեն տեսակ խանութ-ներ բաց են, արհեստաւորները իրանց աղմուկ հանող աշխատանքները հասարակ օրուայ պէս սկսել են, երբեմն էլ նոյն ինքն եկեղեցիների մօտ. Մինչեւ անգամ հասարակական շինութիւններ են սկսում այդ օրը կառուցանել. Մինչդեռ այդ գործը առանց միոր և է վնասի կարելի էր ընդհատել. Երկաթուղիներով և շոգենաւերով անց ու դարձը կիւրակէ և տօն օրերն աւելի շատ է լի-նում քան թէ մի ուրիշ օր, թէև այդ մի քանի յարաբերութեանց մէջ կարելի էր սահմանափակել. Այս. կան նաև այնպիսի երկիրներ, ուր գիւ-ղացիք առանց ամօթիսածութեան և առանց կարիքի դաշտային աշխատան-քով են զբաղվում ուրիշներին գայթագղեցնելու համար. Սիրեցեալք ի Տէր, լաւ կշուցէք կիւրակէներ պղծելուց յառաջ եկած մեղքը և նորա վատ հետեւանքները. որ մարդ կիւրակէ օրերին ծանր և ոչ անհրաժեշտ աշխա-տանքները պիտի շրկատարէ, այդ աստուածային պատուէր է և այն տասնա-բանեայ պատուիրաններից մինը, որն Աստուած իր ժողովրդին Սինայի լե-րան վերայ տուաւ, և որն երբէք յետ չառնուեց այլ միւս օրուան յետա-ձգուեց. Տէրը տասնաբանեայ պատուիրաններից ոչ մինը այնպէս խիստ շեշ-տած չէ, ինչպէս այդ պատուիրանը, և նա ասումէ, « յէշ-ջէր զօրն շարա-թուց սրբել զնա ». ( Ելք. Ի, 8 ). Ոչ մինը նա այնպէս յաճախ կըրկ-նած և պատժով սպառնացած չէ, ինչպէս այդ երրորդ պատուիրանը. Սա-կայն ի՞նչպէս է լինում որ հէնց այդ պատուիրանի մէջ ակնյայտնի զանցա-ռու են դանիվում. Համոզուած եղէք, սիրելի հաւատացեալներ, որ արդե-լուած կիւրակնօրեայ աշխատանքի վերայ բնաւ Աստուածոյ օրհետութիւնը չէ գալիս. թէև Տէրը ոչ ընդ միշտ իսկոյն և եթ զանցառութիւնը չէ պատ-ժում, սակայն քրիստոնեանները չըպիտի մոռնան գորա համար սահմանա-հին պատիժները, « Զշաբաթս իմ պահեսջէք. Ապա թէ ոչ լոիցէք ինձ և ոչ առնիցէք զամենայն հրամանս իմ զայսոսիկ, հաստատեցից ի վերայ ձեր առաջնապու տարակուսանս, զքոս և զդալուկն՝ որ սորեցուցանեն զաչս ձեր, և հաշիցէք յանձինս ձեր, և սերմանեսջէք ի սնութիս զսերմանիս ձեր և արարից ձեզ զերկինս երկաթի և զերկիր ձեր իրրե զպղնձի ». ( Պ. Ա. Կ. Խ. 16. 19. ) « Անիծեալ լիջիր դու ի քաղաքի և յանդի, անիծեալ շտե-մարանք քո և համբարք քո » . ( Բ. Օրէնք Ի. 16. 17 ).

Շարաթուայ պատուիրանազութեան անխուսափելի հետեւանքն էլ այն է, որ միւս պատուիրանները խղճմանքում այլ ևս նեցուկ չեն ունենում և առանց երկիւղի կարելի է պատուիրանազանցել, ինչպէս և երրորդը.

Հէնց այդ էր պատճառ, որ սորանից մի դար առաջ Քրանսական յեղա-միութեան մեծ վարպետները այդ իմացած և ասած են՝ թէ կիւրակէներ վերջացնելն ամենաարագ և ամենաներգործող միջոցն է կրօնական պարտա-ռորութիւնները կատարելուն արգելք դնելու և քրիստոնէական հուատը վերջացնելու համար.

Երանց տեսակում խաւարի որդիք առաւել իմաստնագոյն են, քան լու-սոյ որդիքը. Դոկ դուք, սիրեցեալք ի Տէր, կիւրակէ և տօն օրերը մի որ և

Է գործով պղծելուց զդոյշ կացէք լինի դա անթօյլատրելի աշխատանքով առանց իսկական մի կարիքի, կամ թէ զրուցատրութիւններով, որոնք օրուայ սրբացնելուն արգելք են լինում, կամ լաւ ևս ասել նրան պղծում են: Ո՞վ կարող է ձեր աշխատանքը օրհնել, բացի Աստուծուց:

Ի՞նչպէս կարող էր Աստուծ իւր օրհնութիւնը տալ այն աշխատանքին, որ Ս. օրն պղծած է, որի համար նա ինքն անէծք և սպառնալիք դրած է: Արեմն եղէք ջանասէր և հաւատարիմ կիւրակէ և տօն օրերը սրբելու մէջ, Ներկայ եղէք ճշմարիտ երկիւղածութեամբ սուրբ պատարագին: յաճախ ընդունեցէք սուրբ խորհուրդները: Ճարեցէք ձեզ և ձեր բարեկամների համար հոգեոր սնունդ, որն քրիստոնէական ուսուցման մէջ քարողով և քրիստոնէական վարդապետութեամբ ձեզ տրվումէ, և հաղորդեցէք այդ ըստ ձեր կարողութեան նաև միւսներին: որոնք ձեր բարի օրինակը տեսնելով դարձեալ կաշխատեն կիւրակէ և տօն օրերը սրբելու համար:

### Մահակ:

Ներկայումս մի միայն քրիստոնէութեան հողի վերսյ կանոնած լաւ մաժուլը կարող է պատուար դնել ժամանակի վատ հոսանքների դէմ և մի ապահով պարիսպ լինել ստութեան և թիւր սկզբունքների դէմ: Նորա ամենագլխաւոր նպատակն է ժողովրդի իրաւացի պահանջների և կարիքների թարգման հանդիսանալ և հասարակական կարծիքի վերոյ որոշ չափով ներգ ընդունել:

### Ընդունել:

Մենք մեր ասածներին վերջ չենք տալ: առանց ձեզ ձեր սրտին մէտիկ մի բան յիշեցնելու, այն է, +ըստունեական ընդունելիան էւան+ը: Պնտանիքը՝ թէ պետական և թէ եկեղեցական ընկերութեան արմատն է, դա է մի հասարակութիւն փոքր անդամներից կազմուած: Սակայն ընտանեկան կեանքի հիմունքն է ամուսնութիւնն: Հին հեթանոսութեան մէջ քայլայուած և իր նշանակութիւնը կորցրած ընտանեկան կեանքը Քրիստոս Տէրն մեր վերականգնեց և աստուածահաճոյ ուղիղ կարգի և կանոնի վերածեց: Նա ամուսնական կեանքը ոչ թէ միայն նոր կանոնաւորել ու կարգաւորել է, այլ և ամուսնութիւնը եկեղեցու Եօմն Խորհուրդներից մինն է դարձրել: որով նա մարդու յարաբերութիւնը կնոջ հետ որպէս նշան կամ պատկեր էր արտայայտում, որի մէջ իւր յարաբերութիւնն եկեղեցու հետ պիտի արտափայլէր: Ուստի ամուսնութիւնը ոչ թէ միայն մի նրբ ձեւ և կերպարնք ստացաւ, այլ և ամբողջ ընտանեկան կեանքը մի այլ: ոուրը բնաւորութիւն է առնում: Մարդու յարաբերութիւններն իւր ամուսնի, ծնողներինը՝ մանուկների, տան մեծաւորներինը՝ ծառաների հետ քրիստոնէութեան շնորհիւ էապէս փոխուեց: և ուր որ Քրիստոսի հոգին տիրապետումէ, այնուղ ընտանեկան կեանքը գեղեցիկ կերպով կանոնաւորուած է և նոյն հոգւով թափանցած:

Սիրելի հաւատացեալներ: մենք խորին ցաւակցութեամբ պիտի դանգատենք, որ ներկայ ընտանեկան կեանքը շատ է հեռացած քրիստոնէական

Հոգուց և կարելի է ասել՝ որ դա շատ քիչ փոխուած ձեռք հեթանոսութեան է վերադառնում։ Եւ այդպիսով ընտանեկան կեանքը օրէ ցօր քանդվում։ Աւատի ընտանեկան կեանքը քրիստոնէութիւնից հեռացնելու համար աշխատող մարդիկ պատճառ են լինում նաև ընտանիքի երջանկութեան կործանման ու քայքայմանը։ ահա, ներկայ դրութիւնը մեզ այդ է ցոյց տալիս. զի՞ ծառն ի պտղոյ անտի ծանիցի։

Մ Ն Ո Ւ Ե Ր Ե Խ Ռ Ո Ւ Ե Ր Ե Ա Ն :

Ընտանիքին փրկութիւն բերող գլխաւոր կեառ համարվումէ մանուկների դաստիարակութիւնը — մի կետ, որից ընտանիքի բաղդաւորութիւնն ու դժբաղդութիւնն է կախուած։

Ծնողների սեպուհ պարտաւորութիւնն է ոչ թէ միայն իրանց զաւակներին սնուցանել, այլ և դաստիարակել։ Նոցա դաստիարակել և կրթել ոչ թէ միայն հասարակութեան պիտանի անդամներ պատրաստելու համար, այլ և նոցա ճշմարիտ քրիստոնեաներ և երկնային թագաւորութեան քաղաքացիներ դարձնելու։

Հին և նոր ուխտի գրքերն առանձին իմն շեշտում և որոշում են ծնողների պարտքը. Պողոս առաքեալն երկու խօսքի մէջ է ամփոփում ամբողջ կրթութեան գործը ասելով. «սնուցանիջիք զնոսա (դորդիս) իրատու և ուսմամբ Տեառն» . (Եփես. Զ. 4)։ Այսինքն, ուսուցէք նոցա և քրիստոնէական սուրբ վարչով դաստիարակեցէք, զի մեր ժամանակում ուսուցումն ու դաստիարակութիւնը կրկնակի կերպով մեզ հարկաւոր են. քանի որ մանուկը առանց ծնողների եռանդուն գործակցութեան բաւականաշափ չէ կրթվում և քրիստոնէութեան գործնական վարժութեան մէջ չէ առաջնորդվում։

Թանկադին ծնողներ, մանուկների կրթութիւնը պէտք է վաղ ժամանակից սկսել։ Ցանեցէք արդէն ամենավաղ ժամանակից մանուկների մատաղ սրբաբերի մէջ հնագանդութեան, ժուժկայութեան և բարեալաշտութեան սերմն. Ուսուցէք նոցա մանկութիւնից երկիրածութիւն և անձն մեղքերից հեռու պահելն, դաստիարակեցէք նոցա հաւատի հիմնական ճշմարտութեան մէջ, ուսուցէք նոցա և առնուլ զլուծ խոնարհութեան ի մանկութենէ . (Ողբերեմ. Գ. 27)։ Դործ զրէք ձեր ծնողական իշխանութիւնն ձեր զաւակների վերայ նաև ուսումնարանը թողնելուց զինի, եթէ որ դոքա մինչև անգամ հասակն էլ առած լինին. Միայն այն ժամանակը կարողէք կրթութեան գործը վերջացած համարել։ Երբ դուք այդ հասակում ես անոցա դաշտակութեան քարերից պահպանումէք. Զի, ով որ իւր երիտասարդութեան միջոցին հողմ է ցանել. նա փոթորիկ պիտի հնձէ. Աւստի երանի ձեզ, ծնողներ, եթէ ձեզ կրյաջողուի ձեր զաւակների երիտասարդական հասակին սպառնացող վտանգներից և ամեն դայթագութեան քարերից հեռու պահել. Այն ժամանակը ձեր կեանքի վերջը միսիթարուած հողուով կարողէք աղօթել, ինչպէս որ միանգամ Փրկիչն աղօթած է. «Ես պահէի զիսոս յանուն քո՝ որով ետուրն ինձ. և պահեցի. և ոչ որ ինոցանէ կոր-

եաւ, բայց որդին կորստեան . ( Յովհ. ԺԷ, 12 ).

Սիրելի Հաւատացեալներ, մեր ձեզ հաղորդած ճշմարտութիւնները շատ նշանաւոր են. քննեցէք նոցա և ըմբռնեցէք ժամանակի, մարդկային կեսմաքի ոգին. Մենք ձեզ ժամանակի ամեն շար հոգիներից զգուշացրած, յորդորել ենք Հաւատարիմ մնալ Յիսուսի Քրիստոսի հոգուն. Մեզանից իւրաքանչիւրն կարող է Մովսէսի հետ բացագանձել. «Անիմ ձեզ վկայ այսօր զերկինս և զերկիր. զկեանս և զմահ ետու առաջի երեսց զօրհնութիւնս և զանէծս. և ընտրեա զկեանս, զի կեցցես գու և զաւակ քո. սիրել զՏէր Աստուած քո և լսել ձայնի նորա և ունել զնանէ» . ( Բ. Օրէնք 1. 19, 20 ).

( Թարգմ: ) Ս. Տէր Գարրիէլեանց.

### ՊԱՏՐԱՍՏՈՒՈՂ ՍԵՐՆԴԻ ԱՌՈՂ ԶԱՊԱՀՈՒԹԻՒՆԻ.

( Հ-Հ-Ն-Դ-Բ-Հ-Ն, Ա-Հ-Հ-Կ-Դ- Ա- Ա- )

b.

Եթէ որ իւրաքանչիւր աշակերտին բաժին քնկնող լուսոյ քանակութիւնը շատ մեծ դեր է խաղում. Ներգործելով մանուկի տեսութեան վերաբուժեմն և աւելի մեծ ու նշանաւոր դեր է կատարում օգի այն քանակութիւնը, որ բաժին է Համառւմ գասատան մեջ մէն մի աշակերտին. Օգի այդ քանակութիւնը պայմանաւորվում է գասատանց չափով. « Դասատան սենեակի մեծութիւնը, ասում է Գարենտրապպը. պայմանաւորվում է աշակերտների թուով, նոցա համակին համեմատ բռնած տեղի մեծութեամբ, սեղանների առջերի և յետեի դասարիկ տեղի քանակութեամբ, ամրիխնի, գրատախտակների և գառարանի բռնած տարածութեամբ . . . Բայց գասատան երկայնութեան և լոյնութեան չափը իմանալով, մենք պէտք է նաև ուշադրութիւն դարձնենք գասատան բարձրութեան վերայ, որովհետեւ ցածր սենեակը առողջարար սենեակ չի կարող լինիլ. Դասատան սենեակը չըսկէոք է չափաղանց մեծ լինի, այլապէս մի կողմէց վերջին սեղանների վերայ նստած աշակերտները լաւ չեն որոշիլ գրատախտակի վերայ նկարած կտմ գծակրած ձեւերը, բառերը և թուանշանները, իսկ միւս կողմէց, պատուհանների հանգէպը նստող աշակերտները միւս աշակերտների լուսոյ առաջը ծածկելուց անբաւարար քանակութեամբ լոյս երանուն. Բայցի դորանից չափաղանց մեծ սենեակը գժուարացնումէ ուսուցչի գործը աշակերտաց վերայ հակողութիւն ունենալու զործում, իսկ վերջին սեղանների վերայ նըստուղ աշակերտներն էլ նեղանում են ուսուցչի հարցերին չափաղանց բարձր կերպով պատասխանելու կարեորութիւնից. Այս կերպով գասատան սենեակի մեծութեան հարցը բաւականին բազաղրեալ է. Չնայելով այս առարկայի վերաբերութեամբ արած բաղմաթիւ հետակօտութեանց, մինչեւ այսօր ըժիշկները դպրոցական սենեակների որոշ չափի մասին մի ճիշդ եղբակացու-